ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
PHILOLOGY

ՀՏԴ՝ 89.09
DOI: 10.52971/18294316-2025.28.1-177

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՑԱՍՄԱՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱԽԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Արա Մ. Զարգարյան
ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Հոդվածում ուսումնասիրության նյութ են դարձել Աստվածաշնչի այն պատմություններն ու հատվածները, որոնցում կան Աստվածային ցասման ու մարդկային վախի դրսևորումներ: Հին Կտակարանում շատ են պատմությունները, երբ Աստված իր ընտրյալների հավատն ու ուժը ամրապնդելու համար դիմում է փորձությունների: Զուգահեռաբար Հայր Աստծո ցասումը ևս տարածվում է անհավատների նկատմամբ: Այդ կետում գործ ունենք Պլատոնի առաջ քաշած համակարգի հետ, երբ ստորին գործընթացը ծառայում է վերին համակարգում դրված գաղափարների իրականացմանը: Թիմոսյան վախի մոդելը մարդուն ուղեկցում է ամբողջ կյանքի ընթացքում, և այդ կետում դավանանքը բնավ չի առաջացնում տարընթերցում: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում կիրառվել են զուգադրական, հոգեբանական, հոգեվերլուծական և կենսագրական մեթոդներ: Իրակա*նացվել է նաև տարբեր ստեղծագործությունների միջև համեմատություն: Վերլուծություն.* Աշխատանքում հին հունական դիցաբանությունից մինչև Նոր Կտակարան ընդգծվում են աստվածային ցասման ու մարդկային վախի իրողությունները: *Արդյունքներ.* Կտակարաններում փոխվում են ցասման և վախի ընկալումները: Հիսուսն իր գալուստով փոխում է ցասման գաղափարախոսությունը: Կենտրոնում կանգնում է սերը: Սույն ուսումնասիրության նպատակն է ցույց տալ աստվածային ցասման և մարդկային վախի տարժամանակյա ընկալումները, ընդգծել, որ Աստվածաշնչի մի Գրքից անցումը դեպի մյուս Գիրք մասամբ փոխում է նաև Հոր գաղափարական համակարգի իրագործման մոդելը: Աստվածային ցասումը հավիտենական իրողություն է: Մարդն իր բնությամբ չի կորցնում թիմոսյան վախի ընկալումը:

Բանալի բառեր՝ *Աստված, վախ, ցասում, մարդ, Աստվածաշունչ, Աբրահամ, որդի, հայր:*
Ինչպես հղել՝ Զարգարյան Ա. *Աստվածային ցասման և մարդկային վախի ընկալումներն*

Աստվածաշնչում // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1 (28): 177-184 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-177

PERCEPTIONS OF DIVINE WRATH AND HUMAN FEAR IN THE BIBLE

Ara S. Zargaryan
Institute of Literature after Manuk Abeghyan of NAS, Yerevan, RA

Abstract
Introduction: The article studies the stories and passages of the Bible that contain manifestations of Divine wrath and human fear. In the Old Testament, we often encounter stories when God resorts to trials to strengthen the faith and strength of His chosen ones. In parallel, the wrath of God the Father also extends to unbelievers. At that point, we are dealing with the system put forward by Plato, when the lower process serves to implement the ideas set forth in the upper system. The Timonian model of fear accompanies a person throughout his life, and at that point, religion does not cause any misinterpretation. *Methods and materials*. Comparative, psychological, psychoanalytical and biographical methods were used in the work. A comparison between different works was also carried out. *Analysis.* The work emphasizes the realities of divine wrath and human fear from ancient Greek mythology to the New Testament. *Results:* The perceptions of anger and fear change in the Testaments. Jesus, with his coming, changes the ideology of anger. Love stands at the center. The purpose of this study is to show the perceptions of divine anger and human fear at different times. To emphasize that the transition from one book of the Bible to another also partially changes the model of the implementation of the Father's ideological system. Divine anger is an eternal reality. Man, by his nature does not lose the perception of Timothy's fear.
Key words: *God, fear, wrath, man, Bible, Abraham, son, father.*
Citation: Zargaryan A. *Perceptions of Divine Wrath and Human Fear in the Bible* // "Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, 2025, Vol. 1 (28): 177-184 pp..
DOI: 10.52971/18294316-2025.28.1-177

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Հին հունական դիցաբանության մեջ տիտան Քրոնոսի [3, էջ 25] մոտ տեսնում ենք ցասում: Դա հատկապես դրսևորվում է սեփական զավակների հանդեպ: Իշխանությունը կորցնելու վախից դրդված՝ նա կուլ է տալիս իր 5 զավակներին: Նրա 6-րդ որդին՝ Զևսը, հրաշքով ողջ է մնում: Բարկությունն ու վախը երբեմն գործում են նաև կողք կողքի: Հունական դիցաբանության մեջ քիչ չեն նաև վախի աստվածները՝ Փոբոսը, [3, էջ 247] Թիմոսը, Դեյմոսը [3, էջ 59]: Նրանցից յուրաքանչյուրն ունի վախի՝ իրեն բնորոշ արտահայտումն ու կրում է վախի այդ ձևի աստվածության գաղափարախոսությունը: Աստվածներն իրենք իրենցով մարդկանց մոտ առաջացնում էին վախի՝ թիմոսյան ձևը: Դա վախ է Աստծո ներկայությունից: Թիմոս նաև նշանակում է հոգի, սիրտ, որն արդեն իսկ հուշում է, որ «Սիրտը դող ընկավ» արտահայտությունը հենց թիմոսյան վախից ծագած դարձվածքային ձև է:Հունական դիցաբանությունում աստվածներն իրենց ներկայությամբ, արարքներով կարող էին վախ տարածել իրենց ընտանիքում, իրենք իրենց դեմ (Հիշենք Քրոնոսին, ով վախենում էր իր զավակներից և կերավ նրանց) և մարդկանց դեմ: Քրիստոնեությունը ևս անմասն չմնաց ցասումի և վախի նախաքրիստոնեական ավանդույթից: Սակայն այս-

տեղ ամեն բան մի փոքր այլ է: Վախն անտրոհելի է մարդկային կյանքից: Հին հունական առասպելաբանությունում հայրն իշխում էր ընտանիքում, իշխում էր Օլիմպոսում, նա աստվածների հայրն էր, աշխարհի տիրակալը: Հայր աստծո մոդելը կա Քրիստոնեության մեջ ևս: Մեկ անձ, բայց երեք բնություն ունեցող Աստված Սուրբ Երրորդության գլխավոր ֆիգուրն է:Հայր Աստծո մասին իր մեկնություններում հետաքրքիր դիտարկումներ է անում 2-3-րդ դարերում ապրած և ստեղծագործած հույն փիլիսոփա, աստվածաբան Որոգինեսը: Աստծո՝ հայր անվան մասին իր գրավոր խորհրդածություններում Որոգինեսը նկատում է, որ Հին Կտակարանում գոյություն չունի գեթ մեկ աղոթք, որում Աստված կանչվի Հայր անունով. *«Մինչև հիմա, հակառակ մեր բոլոր պրպտումներին, այդպիսի աղոթք դեռ չենք գտել: Չենք ուզում ասել, որ Աստված այնտեղ Հայր չի կոչվել, կամ ճշմարիտ հավատացյալները Աստծո որդիներ չեն կոչվել: Բայց մեկ տեղ աղոթքի մեջ Աստված չի կանչվել որպես Հայր՝ ըստ նրա հանդեպ լիակատար վստահություն ներշնչող այն արտահայտության, որ մեր Փրկիչը փոխանցել է մեզ»* [4, էջ 95]: Հատկանշական է, որ Որոգինեսը, մեկնաբանելով Աստվածաշունչն ու Աստծո խոսքը, միևնույն դեպքում նաև մասնակի քննադատական կարծիք է հայտնում: Հորից որդի անցման կապի բացակայության մասին խոսում է Մաղաքիա մարգարեն, ում գիրքը Հին Կտակարանի վերջին՝ ամփոփիչ գիրքն է, որ գրվել է Ք.ա. 5-րդ դարի առաջին կեսին: *«Որդին փառաւորում է Հօրը, և ծառան երկնչում է իր Տիրոջից: Իսկ արդ, եթէ ես ձեր Հայրն եմ, ո՞ւր է իմ փառքը, իսկ եթէ Տէր եմ, ո՞ւր է այն հարգալից երկիւղը, որ պարտական եք ինձ»* [1, էջ 1115]: Հին Կտակարանում հավաստի չի նշվում հորից որդի ծննդակարգը: Այլ կերպ ասած Մաղաքիա մարգարեն փաստում և ընդգծում է, որ որդիներն ավելի շուտ հպատակներ են, որոնք պետք է երկյուղ ունենան Հորից: Հենց այս վախն է, որն առկա է Հին Կտակարանի մի շարք դրվագներում: Այս վախի մասին է խոսում նաև բողոքական Աստվածաբան Սյորեն Կիերկեգորն իր «Ահ ու դող» աշխատության [6] մեջ: Եթե խտացված խոսենք վախի կիերկեգորյան գաղափարախոսության մասին, ապա մեծ դանիացին ընդգծում է, որ ոչ մի ժամանակ, վայր ու թաքստոց չի ապահովագրում ու հեռացնում մեզ վախից: Այստեղ պետք է հիշել ու ընդգծել, որ երկյուղից առաջացած փախուստի մասին լավագույն օրինակը Հովնան մարգարեի պատմությունն [8] է: Այն փաստում է, որ չկա թաքստոց անգամ ջրերի հատակում: Ընդհանրացնելով թեման՝ Կիերկեգորը տալիս է մի միտք, ըստ որի Աստված անհանգստությամբ հալածում է մարդուն, քանի որ ցանկանում է սիրված լինել մարդու կողմից: Տերունական աղոթքում տեսնում ենք, որ Աստծուն հավատարիմ մարդը պետք է երկնային Հորից խնդրի, որ Աստված իրեն հեռու պահի փորձություններից: Զուգահեռաբար Աստվածաշնչում տեսնում ենք նաև Աստվածային փորձությունը: Թե՛ Մատթեոս, և թե՛ Ղուկաս ավետարանիչները վերարտադրել են Հիսուս Քրիստոսի աղոթքի բանաձևը: Չնայած երկու տարբերակներում [4, էջեր 87-88] գաղափարական իմաստով կան մասնակի տարբերություններ, սակայն «Եվ մի տար մեզ փորձության» նախադասությունը երկու ավետարանիչների մոտ գրված է նույնությամբ: Հետևաբար Աստված և՛ փորձությունից մեզ հեռու պահողն է, և՛ մեզ փորձությամբ ուժեղացնողը: Աստվածաշնչյան փորձությունների մասին Որոգինեսն ունի իր մեկնաբանությունը, որտեղ կա և՛ մասնակի քննադատություն, որն ուղղված է Աստծուն, և կա՛ աստվածաշնչյան հերոսուհու՝ Հուդիթի շուրթերով մեկնաբանություն *«Փրկիչն ինչպե՞ս*

կարող է մեզանից պահանջել, որ փորձության մեջ չընկնենք, երբ որ, ճիշտն ասած, Աստված փորձում է ամեն մարդու: Հիշենք, ասում է Հուդիթը ոչ միայն քահանաներին, այլև նաև իր բոլոր ընթերցողներին, թե ի՛նչ պատահեց Աբրահամի հետ, թե Աստված ինչքան փորձեց Իսահակին, և թե ի՛նչ ապրումներ ունեցավ Հակոբը Ասորիքի միջագետքում, երբ արածեցնում էր իր մորեղբոր՝ Լաբանի ոչխարները: Նա նրանց փորձության ենթարկեց՝ մաքրելու համար նրանց սրտերը: Աստված մեզ փորձում է ոչ թե կորստյան մատնելու, այլ ուղղելու համար» [4, էջ 139]: Աստվածաշնչում հանդիպում ենք, երբ դառն փորձության միջով անցնող մարդն ուղղվում է, գտնում ճիշտ ճանապարհն ու հետևում Աստծուն: Աստվածային բարկության ու պատժի առաջնային օրինակը տեսնում ենք Ծննդոց գրքում զետեղված Ադամի և Եվայի պատմության մեջ: Դրախտում արգելված պտուղը ճաշակելուց հետո առաջին մարդիկ վտարվեցին այնտեղից, քանի որ *«Ադամը դարձավ մեզ նման մէկը, նա գիտի բարին եւ չարը»* [1, էջ 7]: Բարու և չարի ծառն ինքնին իմացության ծառն էր: Իսկ իմացություն ձեռք բերած մարդն իր զարգացումը շատացնելով կարող էր հանգեցնել դրախտի կործանմանն այնպես, ինչպես դա եղավ աշխարհի հետ՝ համաշխարհային ջրհեղեղի ժամանակ: Ֆրանց Կաֆկան դրախտի մասին իր պարադոքսում մարդու վտարումը հաջողություն է համարում, քանի որ հակառակ դեպքում մարդն ի զորու էր կործանել նաև դրախտը: Առաջին մարդկանց կողմից անհնազանդության միջոցով գիտակցություն ձեռք բերելու փորձը հանգեցրեց սկզբնական մեղքին: Այս դեպքում Աստված զայրացավ մարդկային անհնազանդության պատճառով: Առաջին մարդիկ գիտեին, որ անծայրածիր սահմանների դիմաց կար փոքրիկ գիծ, որն անցնել պետք չէր, սակայն հետո գայթակղությամբ կատարվեց մեղքը, ու մարդիկ ստիպված եղան լքել դրախտը: Կայենի ու Աբելի պատմության մեջ ևս նկատում ենք մեր քննության նյութի գաղափարական հիմքերից: Կայենը շարունակեց ծնողների կողմից մարդկային գիտակցության բացահայտման փորձը: Մարդու կողմից սպանված առաջին մարդու պատմության մեջ հիշարժան է արդեն իսկ մեղքի զգացումն ու գործած հանցանքի համար սպասվելիք դառը պատիժը: Եվ հենց սկզբից եղբայրասպան Կայենը,գիտակցելով կատարվածը՝ մահվան բացահայտման փորձը, Աստվածային պատժից զատ արարչից խնդրում է նաև ինքն իրեն պատժելու հնարավորություն. *«Գործած մեղքս մեծ է թողութեան արժանի լինելու համար: Եթէ այսօր ինձ հանես երկրից, ես կը թաքնուեմ քեզանից, ահ ու դողի եւ երերման մեջ կը լինեմ երկրի վրայ, եւ ով հանդիպի, կը սպանի ինձ»* [1, էջ 8]: Կայենի խոսքերում նկատում ենք գիտակցության ոչ լիարժեքություն, քանի որ եղբայրասպանը գիտակից պատկերացում չունի անձնասպանության մասին: Դա հայտնվեց նաև Քրիստոսին մատնած Հուդայի մոտ: Գործած հանցանքի պատիժը Կայենը պատկերացնում էր կրել ինքնասպանությամբ: Աստվածաշնչյան հետագա կերպարների մոտ կամաց-կամաց ուրվագծվում է մարդկային գիտակցության զարգացումն ու աշխարհն ընկալելու կարողությունը: Մյուս կողմից մարդկային զարգացման հետ մեկտեղ ավելանում էր Հայր Աստծո բարկությունը: Աստվածային փորձության Ադամական պատմությունից հետո ամենածանր փորձություններից մեկը բաժին հասավ Աբրահամին: Այս դեպքում աստվածավախ Աբրահամը կիերկեզորյան բանաձևին համապատասխան պետք է իր սերն Աստծո նկատմամբ ապացուցեր սեփական զավակի զոհաբերությամբ: Աստծո կողմից մեծ ցեղի նախահոր խոստում ստացած Աբրահամն իր գործունեությամբ

ու հավատքով թերևս մինչև իր որդու՝ Իսահակի զոհաբերության դրվագը, չէր թերացել: Նրա ու Հայր Աստծո միջև երկխոսությունն Աստվածահաճո էր: Սակայն Տիրոջը՝ «Աստված հավիտենական» սուրբ կապակցությամբ պաշտելուց հետո տեղի ունեցավ փորձությունը: Ֆրանց Կաֆկան իր «Աբրահամ» պարադոքսում խոսում է Աբրահամի հոգևոր աղքատության մասին. *«Աբրահամի հոգևոր աղքատությունն ու այդ աղքատության իներտությունը առավելություն է. այն հեշտացնում է նրա կենտրոնացումը և կամ գուցե այն ևս կենտրոնացում է, որով նա, իհարկե, կորցնում է առավելությունը, որ կենտրոնացման կիրառման վրա է հիմնված»* [2, էջ 17]: Աբրահամի կյանքում վերելքները շատ էին, և հերթական վերելքի հիմքում պետք է լիներ վայրէջքը: Այս դեպքում Աստծո փորձությունը, որն ամենամեծ «անկումն» էր Աբրահամի համար, պետք է դառնար մեծ վերելքի սկիզբը: Այս պայքարում Աբրահամը միայնակ էր, քանի որ Սառայի «ծիծաղն» [1, էջ 20] արդեն իսկ փաստել էր, որ մեծ վերելքի ճանապարհը կսկսվի Իսահակի ծննդից հետո: Եվ հանկարծ լսվում է Աստծո ձայնը, ու սկսվում է տանջանքը՝ մեծ վերելքից առաջ: Որքան էլ Կաֆկան Աբրահամի ներսում տեսնում է մասնակի հոգևոր աղքատություն, այնուամենայնիվ Աբրահամը Հովնան չէր: Նա վերցրեց իր որդուն, և նրանք բարձրացան լեռը: Լեռան գագաթին երկկողմանի ներքին լռությունը խախտվեց Աստվածային կոչով: Հենց այդ կետում էր պահվում խորհրդավոր միտքը: Լեռան վրա էր թաքնված գաղափարը: Աստծո կողմից սա համոզմունքի փորձություն էր, որով նա առավել վստահեց Աբրահամին և տեսավ նրա երկյուղը: Սակայն մինչև գագաթ հասնելը Աբրահամի լռության մեջ թաքնված է մի ամբողջ տառապանք: Այս ողբերգության երկրորդ կողմում որդին է, ով նույնպես լուռ էր, սակայն ինչ-որ պահի խոսեց, որպեսզի լռության շտեմարանից ինչ-որ բառ դուրս բերի. *«Ահա կրակը, և ահա փայտը, հապա ո՞ւր է ողջակիզելու ոչխարը»* [1, էջ 24]: Իսահակի կասկածամտությունն ու լուռ, ողբերգական քայլքի փլուզումը սահմանեց լեռան ճանապարհի մասին բացատրությունը: Այս մի փոքր անհասկանալի ու փակ համակարգի մասին իր յուրահատուկ մեկնությունն է ներկայացնում Սյորեն Կիերկեգորը վերևում արդեն հիշատակված գրքում [6]: Կիերկեգորն իր գրքում քննում է հին հունական և աստվածաշնչյան 2 առասպելներ, որոնց հիմքում հոր կողմից զավակին զոհաբերելու պատմությունն է: Առաջին պատմության մեջ Ագամեմնոնն է, ով պետք է զոհաբերեր իր դստերը՝ Իֆիգենիային, քանի որ պատերազմ գնալու համար պետք էր համընթաց քամի: Աստվածների ցանկությունն էր, որպեսզի Ագամեմնոնը զոհաբերի իր ամենաթանկ, ամենամեծ բանը, հանուն ընդհանրական շահի: Կիերկեգորն այս պատմության մեջ տեսնում է տրամաբանություն, քանի որ զոհելով ամենաթանկը՝ Ագամեմնոնը նպաստեց ընդհանրական նպատակի կայացմանը: Դանիացին ընդգծում է նաև հունական առասպելական կերպարի հերոսությունը: Կիերկեգորը Աբրահամի լռության հիմքում տեսնում է ներքին մեծ հավատը, ներքին աշխարհում ներփակված լինելը: Արտաքին աշխարհում Աբրահամի մոտ լռություն է, քանի որ արտաքին ու ներքին աշխարհների միջև կա բախում, անհասկանալի գիծ: Մյուս կողմից Կիերկեգորն այս պատմությունը որոշում է դիտարկել այն համատեքստում, որ թե՛ Աբրահամը, և թե՛ Աստված գիտեին, որ Իսահակի զոհաբերությունը տեղի չի ունենա: Կիերկեգորն այս տարբերակի մասին և՛ խոսում է, և՛ վերջում տալիս այն գնահատականը, որ իրականում այստեղ Աբրահամի մեծ հավատն էր գործում: Կաֆկան Իսահակին չզոհաբերելու դեպքում

տեսնում է Աբրահամի մեղքը, քանի որ նա չհավատաց, որ այդ ամենը նախասահմանված է իրեն: Հին Կտակարանում Աբրահամի ողբերգական պատմությունից հետո զարգանում էր մարդկային չարությունը: Այն ստանում է աստվածային ցասումն ու պատիժը: Եթե այս պատմության մեջ Իսահակը ողջ մնաց, փրկվեց, ապա «Հոբի» գրքում մենք տեսնում ենք մեկ այլ կարգավիճակ, որտեղ արդեն իսկ չեն փրկվում անգամ Հոբի որդիները: Այստեղ Հոբը պայքար է մղում երկակի ուժերի դեմ: Աստծո ու սատանայի միջև զրույցի [1, էջ 957] արդյունքում սահմանվում են ապագայի ծանր օրերը Հոբի համար: Աստված ի սկզբանե սատանային կոչ է անում իր ընտրյալին ենթարկել ամեն փորձության: Եթե սկզբնական շրջանում տանջանքի հիմքում նյութական հարստության կորուստն է, ապա հետագայում հարվածը հասցվում էր ամենածանր կետին՝ Հոբի զավակներին: *«Մինչ քո տղաներն ու աղջիկներն իրենց աւագ եղբօր մօտ ուտում-խմում էին, անապատից յանկարծակի սաստիկ հողմ փչեց ու խփեց տան չորս անկիւններին. տունը փլուեց քո զաւակների վրայ, ու նրանք վախճանուեցին: Միայն ես ազատուելով՝ եկայ քեզ պատմելու»* [1, էջ 958]: Այստեղ ահա, ի տարբերություն Աբրահամի պատմության, տեսնում ենք մարդկային կորուստ: Եթե նախորդ դեպքում ողբերգությունն ավելի մեծ էր, քանի որ հայրը պետք է սպաներ որդուն, ապա այս դեպքում Հոբն ուղղակի լուռ դիտորդն էր իր զավակների կորստի: Տառապանքի հիմքում փորձությամբ ամրանալն էր ու Աստծո նկատմամբ հավատի մեծացումը: Եթե այս պատմությունը դիտարկում ենք միայն գաղափարական հենքի վրա, ապա ստացվում է, որ Աբրահամից, Մովսեսից և մյուսներից հետո Աստված դեռ մասնակի կասկածամիտ էր իր ընտրյալների հարցում: Հոբի պատմության մեջ ողբերգական է հուսահատ մարդու կերպարը: Որքան էլ նա, դիմակայելով փորձություններին, հասավ իր նպատակին, այնուամենայնիվ Հոբի տառապանքներում մարդկային ողբերգությունն էր: Սա և մյուս դեպքերը կարծես անհատական ողբերգություններ լինեին:Հոբի թվացյալ կործանումն ու տառապանքը հատկապես ազդեցիկ կերպով երևան է գալիս այս տողերում. *«Եվ սատանան հեռացավ Տիրոջ առջևից և ոտից գլուխ չարորակ վէրքերով պատեց Յոբին: Եւ Յոբը խեցու մի կտոր առնելով՝ քերում էր թարախը. նստում էր աղբիւսում, քաղաքից դուրս»* [1, էջ 958]: Հատկանշական է, որ թե՛ Աբրահամի, թե՛ Ադամի և թե՛ Հոբի դեպքում կանանց կերպարները հանդես են գալիս Աստծո նկատմամբ կասկածամտությամբ: Նրանց մոտ առավել գործում է միտքը, տրամաբանությունն ու բանականությունը, իսկ իրենց ամուսինների դեպքում հավատը, որը տեղ-տեղ կերպարին կարծես թե դարձնում է ինքնամփոփ: Ավ. Իսահակյանի «Լիլիթ» ստեղծագործությունը լավագույն կերպով փաստում ու ներկայացնում է կնոջ ռացիոնալ մտածողությունն ու դրան հակադրված տղամարդու պատկերը: Ադամն ապրում էր երազային աշխարհում, որտեղ գործում էր սիրտը, իսկ Լիլիթի մոտ միտքն էր: Հոբի դեպքում իր կնոջ սթափության կոչից [1, էջ 958] հետո է, որ Հոբի մոտ կասկածամտությունն է երևում: Թեև այս ամենը հասնում է մինչև Հոբի կողմից իր իսկ անկարողության խոստովանությանը, սակայն պատմության վերջում Աստված վարձատրում է Հոբին ու բազմապատկում նրա կորուստը: Թեև շատ ավելի ուշ Արթուր Շոպենհաուերը հաստատելու էր, որ *«Կյանքը անվերջ խաբեություն է, մի ձեռնարկ է, մի անհաջող գործարք, որն իր ծախսերը երբեք չի ծածկում և երբեք իր խոստումները չի կատարում»* [7, էջ

63], այնուամենայնիվ Հոբը ոչ միայն պահպանեց իր գոյությունը, այլև բազմապատկեց իր ունեցվածքը՝ փորձություններին դիմակայելուց հետո:

Հին Կտակարանում թերևս Աստվածային ցասումի և պատժի ամենամեծ դրսևորումները տեսնում ենք Մովսեսի պատմության մեջ: Աստծո կողմից Մովսեսն ընտրված էր իսրայելացիներին Եգիպտոսի գերությունից ազատելու համար: Նախ շրջադարձային էր Մովսեսի քննադատությունն ու հռետորական հարցը՝ ուղված Աստծուն. *«Տէ՛ր, ինչո՞ւ չարչարեցիր քո ժողովրդին և ինչո՞ւ ուղարկեցիր ինձ: Այն պահից, երբ մտայ փարաւոնի պալատը քո անունից նրա հետ խօսելու համար, նա չարչարեց ժողովրդին, իսկ դու երբեք չես փրկում քո ժողովրդին»* [1, էջ 69]: Թեև դա ներկայացվում է որպես գանգատ, սակայն այդ խոսքերից անմիջապես հետո տեսնում ենք, որ Հայր Աստված վճռական է տրամադրվում. *«Հիմա կտեսնես, թե ինչ եմ անելու փարաւոնին»* [1, էջ 69]: Եվ Աստծո կողմից 10 հարվածներ են հասցվում Եգիպտոսին: Եթե գետերի արյուն դառնալու, գորտերի, մժեղների, շնաճանճերի, կարկուտի, անասունների կոտորածի, թանձրամած խավարի, մորեխների պատժի դեպքում այդքան էլ մեծ սարսափ չկար, ապա Հոր ցասումի ու պատժի ամենամեծ դրսևորումը եղավ եգիպտացիների մոտ ուռուցքի տարածումն ու անդրանիկ երեխաների մահը: Սա բաժին հասավ բոլոր եգիպտացիներին, ովքեր ունեին անդրանիկ որդիներ: Այս պատիժն ու տառապանքը Աստված համարեց զարմանահրաշ գործ: Երբ Մովսեսը փարավոնին հայտնեց Աստծո այս ցանկության մասին և զայրացած դուրս եկավ փարավոնի մոտից, Աստված Մովսեսին փաստեց, որ փարավոնն իրեն չի լսելու, որպեսզի ինքը եգիպտացիների երկրում ավելի շատ նշաններ ու զարմանահրաշ գործեր անի: Այս պարագայում տեսնում ենք վերևում արդեն իսկ նշված կիերկեգորյան բանաձևի առկայությունը. ընդհանրական գաղափարի ու նպատակի իրագործում, կա՛մ իսրայելացիների փրկություն. *«Եգիպտացիների ամբողջ երկրում մեծ աղաղակ բարձրացաւ, որովհետև տուն չկար, որտեղ մեռել չլինէր»*[1, էջ 77]: Այս բանաձևին լրացնելու է գալիս նաև Պլատոնն իր իդեալների աշխարհի մասին զրույցների սահմանագծում. *«Իդեալական (իդեաների) աշխարհը կազմում է հիերարխիկ սիստեմ, որի մեջ ստորին գաղափարները ենթարկված են վերիններին, գագաթին բարիքի գաղափարն է»* [5, էջ 15]: Դա այն էր, ինչը գնահատվում է հին հունական առասպելներում: Պլատոնն իր վերոնշյալ դիտարկմամբ վերևում տեսնում է բարության միտքը, ապա Աստծո համար այդ գաղափարը հասանելի է միայն իր ընտրյալների համար: Այստեղից էլ ծնվում է նվիրյալի կողմից կամքը չկատարելու հետևանքով ստեղծված պատիժը, որն էլ քրիստոնեական ուսմունքը վերաձևակերպեց որպես անհնազանդություն: Իսկ վերևում բարության և գաղափարական աշխարհի հետ առերեսման առաջին փորձը ձախողվեց: Բաբելոնյան աշտարակաշինությունը տապալվեց, ինչպես Կաֆկան է ընդգծում՝ «Եթե հնարավոր լիներ կառուցել Բաբելոնի աշտարակը առանց բարձրացնելու այն դեպի վեր, թույլ կտրվեր» [2, էջ 15]:

Ե Զ Ր Ա Հ Ա Ն Գ ՈՒ Մ. Նոր Կտակարանում գրեթե չենք տեսնում Հայր Աստծուն: Այնտեղ զգում ենք նրա շունչը: Այստեղ Հայրը ուղարկում է որդուն, ով ամենամեծ ողբերգության գլխավոր հերոսն է: Տեղի է ունենում Հին և Նոր Կտակարանների գաղափարական հենքի մասնակի փոփոխություն: Որդին բերում է սիրո նոր ընթերցումը: Նոր Կտակարանում որդին ուղարկվում է որպես զոհ՝ իր մեջ կրելով Հայր Աստծո մահվան, հարության և փրկության գաղափարախոսությունը: Այս կետում նկատում ենք աստվածա-

յին ցասումի ուղղակի վերացում, քանի որ որդին բացառապես սիրո ու նվիրումի գաղափարախոսության տարածողն է լինում, սակայն չի զլանում կրկնել նաև զղջման ու ներման գաղափարախոսությունը: Աստվածային ցասումի և դրանից մարդկային վախի մոդելը նախաքրիստոնեական մշակութաբանական, աստվածաբանական համակարգում առկա է: Այն նկատում ենք նաև Հին կտակարանում: Նոր կտակարանում որդին իր հետ միասին բերում է այլ գաղափարախոսություն, որը բնականաբար տրվում է Հոր շնչով: Թիմոսյան վախի մոդելը գործում է հավերժորեն: Սակայն աստվածային ցասումը մարդու համար դարձել է անտեսանելի: Աստվածային ցասումն ու դրանից մարդու վախը անտրոհելի է մեր բնությունից:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աստուածաշունչ,** Էջմիածին: Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն հրատ.: 2016: 1501 էջ:
2. **Կաֆկա Ֆ**. *«Առակներ և պարադոքսներ»*, Երևան: «Նաիրի» հրատ.: 2014: 71 էջ:
3. **Կրկյաշարյան Ս.** *«Դիցաբանական բառարան»:* Երևան, «Լույս» հրատ.: 1985: 264 էջ:
4. **Որոգինես,** *Աղոթքի մասին,* Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրատ.: 2007: 173 էջ:
5. **Պլատոն**, հատոր 1, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ.: 2006: 252 էջ:
6. **Кьеркегор С**, *"Страх и трепет"*, М., "Республика", 1993, 109 с..
7. **Шопенгауэр А**., "Избранные произведения", М., "Республика", 1992, 560 с..
8. **Սուրբ Հովնան,** https://www.qahana.am/am/christian/show/518724145/10

R e f e r e n c e s

1. **Astvacashunch** [Bible],Ejmiacin, Hayastani Astvacashnchyan ynkerutyun hrat., 2016, 1501p.. (in Armenian)
2. **Kafka F**. Proverbs and paradoxes, [Arakner ev paradoqsner],Yerevan,"Nairi" hrat.,2014,71p..(in Armenian)
3. **Krkyasharyan S**., Mythological dictionary [Dicabanakan bararan], Yerevan, "Luys" hrat., 1985, 264p. (in Armenian)
4. **Vorogines**, About prayer [Axotqi masin], Mayr Ator S. Ejmiacin hrat., 2007, 173 p. (in Armenian)
5. **Platon**, [Platon, hator 1], Yerevan, "Sargis Khachenc" hrat., 2006, 252 p. (in Armenian)
6. **Kierkegor S**. Fear and trembling [Strax i tepet] M., "Respublika", 1993, 109 p. (in Russian)
7. **Shopenhauer A**. Selected Works [Izbrannie proizvedeniya] M., "Respublika", 1992, 560 p. (in Russian)
8. **Surb Hovnan**, https://www.qahana.am/am/christian/show/518724145/10

Ընդունվել է / Received on: **09. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **14. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արա Սմբատի ԶԱՐԳԱՐՅԱՆ՝ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ zargaryanara1994@gmail.com // oricid id: 0000-0002-0087-5232

Ara Smbat ZARGARYAN: Junior Researcher at the Institute of Literature named after Manuk Abeghyan of NAS, Yerevan, RA,
e-mail: zargaryanara1994@gmail.com // oricid id: 0000-0002-0087-5232